

աղաչեմ յիշման արժանի առնել. և եթէ մին՝ թխտի, կամ մին՝ սակաւ իրաց երախտիք ունի ի սուրբ գիրքս, գիտխարէնն յաստուծոյ առցէ աստ և ի հանդերձեալն. և եթէ որ զկազմելէն տա լի սրտիւ միոյն հաղար աստուած փոխարէն տացէ նմա, և էնց համարի թող թէ զաստուածաշունչս բոլոր նա է տուեր գրել. զի թէ պէտնորոգողն է, թէ պէտ նոր գրել տուողն, ի միասին պիտի պսակին ի Քրիստոսէ»...

Նորագիր յիշատակարան մ'ալ, ճիս Պետոր կրօնաւորս որ եկի ի սուրբ ուխտս որ կոչի Ղազարու վանք, որ և յաղմանէ չարին մատնեցին զիս ի ձեռս անօրինաց. և ես գիշերն փախեա և եկի աստ, զոր տէր աստուած անփորձ և անդրդուելի պահէ զՅովաննէս վարդապետն և զիւր միաբանքն զտէր Մեսրոպըն և զտէր Ստեփաննոսն որ ինձ քան զչափն աւելի հարկիս արարին... ի թ՛վին ՌՃԺԷ. տանուտէրն կարիճն է»:

Գրչազրիս մէջ չկան նկարք. զարդագիրք, խորանք կամ վերնազարդքն ալ անյուք և առանց արուեստական ճարտարութեան. աւ և օ անխտիր գործածուած կը տեսնուին. ի վերջ բայից յաճախ զանց կ'ըլլուի յ տառն: Ստացողն Ներսէս՝ եթէ չէ համանունն Պաղտնց կամ Պալիեանց, այլ մի է ի Միաբանեացն կամ յՈւնիթորաց: Զայս կ'ակնարկեն բացայայտ վարդապետութիւնն բոլորման Հոգւոյն սրբոյ, և յիշատակութիւն բահանայապետին Հռովմայ Յովհաննու. — ի լուսանցս գրչազրիս նշանակին ուրեք և համեմատութիւնք ընդ լատինականին Յ (Յրանկն) տառով: — Ստուածաշունչն ամբողջ ամփոփեալ յ'953 էջս:

**ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ**

**ՆԱԲՈՒԼՈՆ Ա. ԵՒ ՀՐԵԱՅՔ**

Այսօր մինչդեռ ուրիշ երկիրներու մէջ կը տեսնենք որ Հրէից կ'արգիլուին բացարձակապէս ստացուածք, նիւթական և բարոյական մտաւոր մշակութիւն, հետաքննական կը համարինք ցուցընել ընթերցողաց թէ ընդհակառակն ինչպէս Նաբոլէոն Ա. երկրի մշակութիւնը և արուեստից և գիտութեանց զբաղիլը միակ միջոց համարեր էր հաւասարելու զՀրեայս ընդ այլ քաղաքացիս, և ազատել զիրենք ծանրը և գրեթէ յանհաւատալի զրպարտութեանց իր հպատակ սամկին:

Հրեայք զՆաբոլէոն Ա. կը համարին իբրև հիմնադիր իրենց քաղաքական բացարձակ ազատութեան. իսկ միւս կողմէն հակառակօրոք իրենց գործածին փաստ և վկայութիւն կը համարին նոյն իսկ Նաբոլէոնի Առաջնոյ ընդդէմ Հրէից հրատարակած ծայրայեղ և խիստ օրէնքները. ուստի այս երկու կարծեաց հակասութեան մէջ՝ օգտակար է մանրամասնաբար փնտռել Նաբոլէոնի Առաջնոյ ընդ Հրեայս ունեցած յարաբերութիւնքն: Տարակոյս չկայ որ նա այս բանիս մէջ ալ

ցուցուց պայծառ նպատակ և հաստատուն կամք մը, գործիչ և զաւ արդարութեան և ազատութեան, սակայն շատ տարիներ և ծանր օրէնքներով խտուրթիւն մը գործածեց ընդ նոսա, որպէս զի իւր աւելի ընդարձակ գաղափարաց և նպատակներու կարենայ ծառայեցնել այս խտուրթեան արդիւնքն և արգասիքը:

Երանօթ է ամենուն որ Գաղղիոյ Հրէից մեծագոյն մասը կը բնակէր, ինչպէս նաև այժմ՝ արևելեան գաւառներուն մէջ: Ֆրանքֆորդի դաշնադրութեամբ Գերմանիոյ անցած ժողովրդեան մէջ՝ ամբողջ Գաղղիոյ գաւառներէն աւելի Հրեայք կան: Ալլաացիոյ գեղեցիկ և արգասաւոր երկիրը, իսրայելացւոց համար թուի թէ միշտ յանկուցիչ, հրապուրիչ և յահաւետն եղած է, որովհետև ընդդէմ ամէն տեսակ հալածանաց, ճնշմանց և զրկանաց, փոխանակ նուազելու միշտ տեսներ և բազմացեր են: Ալլաացիոյ Հրէից պատմութիւնը գրած է Պապատմութիւն մը խոյտանգանաց, հալածանաց և զրկմանց. սակայն պէտք ենք նշանակել որ Լուդովիկոս ԺԶ իր վաւեր նաւակօք (lettres patentes) 1788 յուլիս 10 շնորհեց Հրէից զկարողութիւն ստանալու անդատանա և այդիս, մշակելու, հանքաց վրայ աշխատելու, հասարակաց շինուածոց մասնակցելու և վերջապէս առանձին տուն ըստանալու:

Յեղափոխութիւնը քիչ ժամանակէ վերջը, զՀրեայս քաղաքացի կը հրատարակէր, ինուլի իրաւամբ և հաւասար այլոց. յեղափոխութեան առաջին տարիները, ինչպէս ժողովրդական կամ աւսովական ամէն կիրք զայրացաւ և բորբոքեցաւ, այսպէս նաև յԱլլաացիա ընդդէմ Հրէից ժողովրդեան ատելութիւնն կրկնապատկեցաւ. այն ատեն կարգադրիչ ժողովոյն դիմեցին՝ որպէս զի իր պաշտպանութեան տակ առնու զաբացիացի Հրեայս ընդդէմ բռնութեանց ժողովրդեան: Սակայն ուրիշ մաս մ'ալ դիմեց նոյն ժողովոյն՝ որպէս զի վերջ տայ Հրէից վախառութեան և յափշտակութեան, որով զժողովուրդն կը կեղեքէին: Ուստի խնդիրը այսպիսի կատարեալ և կենդանի գիրքի մէջ դնելով՝ սկսաւ ժողովը քննել դաւանութեանց և արուեստից հաւասարութեան խնդիրները: Քլէրման Թոմնէր թէ արուեստաւորաց և թէ Հրէից համար կը խնդրէր ազատութիւն մտանելոյ ի հասարակաց պաշտամունս: Սակայն հակառակորդ թէ այս անգամ և թէ ուրիշ բազմաթիւ դիպուածոց մէջ չկրցան որոշել և զանազանել խընդիրը. ուստի միայն 1791 սեպտ. 27 ի վճիռը եղաւ որ ցայսօր իսկ Հրեայք կը համարին իրենց քաղաքական հաւասարութեան զլիսաւոր հիմունքը:

Եկան յետոյ Ուղղիչ ժողով, Հիւպատոսութիւն և կայսերութիւն: Հրէից դէմ զրպարտութիւնք, տրտունլք և տժգոհութիւնք աւելի ևս կ'աճէին և կը զայրանային. կը նախատէին զիրենք՝ իբրև թէ իրենց որդիքը կը գաստիարակէին միայն անյադ ստակի սիրով, և թէ ոչ ոք կըզբա.

դէր ազատ և գեղեցիկ արուեստից, մշակութեան, և թէ ամէն տեսակ հնարիւք և խարէութեամբ փախուստ կու տային 'ի զինուորացիութենէ և 'ի զինուորական ծառայութենէ:

Փուժը որ 1806ին քննեց այս խնդիրը, կը զանազանէ զորդուգէզ Հրեայս (որք կը բնակէին, 'ի Պորտոյ և 'ի Կարոն) 'ի գերման Հրէից Ալասցիոյ. զառաջինս կը կոչէ գերադանց ցեղ մը՝ որք ջանացեր էին գրեթէ բոլորովին ջնջել իրենց կրօնից մէջ գտնուած ընկերութեան ֆնասակար մասունք. և գովեստիւք կը յիշատակէ որ արդար և օգտակար կերպով վաճառականութեան զբաղելով հանդերձ թէ արուեստից և թէ գիտութեանց ևս յարգ կու տային. մինչդեռ զգերմանացի Հրեայս՝ կը կոչէ խառնիճաղանճ բազմութիւն մը անխիղճ վաշխառուաց. այս բանիս կը վկայէ նաև հեղինակութիւն ունեցող իտալիացի մը՝ իտահակ Պէռ. իւր առ ծերակոյտն կրէկուսառ ուղղած նամակի մը մէջ, զոր կը վերջացնէ ըսելով թէ անկարելի է յուսալ որ գեռ այսչափ քիչ տարիներ առաջ լուծէ ազատած ժողովուրդ մը՝ իսկոյն բարոյական դաստիարակութիւն մը ստանայ:

Խնդիրը այս դիրքին մէջ էր՝ երբ միջամտեց Նաբոլէոն Ա. այն ժամանակներ Հրէից դէմ բազմաթիւ ամբաստանութիւնք կ'ըլլային բազմակնութեան, զոր ստոյգ ալ չէին գիտէր թէ արդեօք իրենց օրէնքը թող կու տայ. սակայն այս տեսակ զրոյցք բոլորովին անհիմն ալ չէին, զոր որոշ կը տեսնենք ֆաղաքապետաց, մանաւանդ արևելեան գաւառաց, առ տէրութիւնն ուղղած տեղեկութեանց մէջ: Ուրեմն կը գտնուէր արդեօք իրենց օրինաց և կրօնից մէջ ինչ ինչ հակառակ կամ ֆնասող արդի ընկերութեան սկզբանց և Գաղղիոյ օրինաց:

Այն ատեն կայսրը որոշեց զումարել նշանաւոր Հրէից ժողով մը, որք պիտի բացատրէին իրենց վրայ եղած ամբաստանութիւնները և պիտի որոշէին թէ ինչ միջոցներ աւելի յարմար կը դատէին՝ որով կարենային հրաւիրել իրենց կրօնակիցք յարուեստս և 'ի պատուաւոր պարապմունսս, վերջ տալով այն անպատիւ արուեստից և շահադիտութեանց՝ որոց կը պարապէին և կը հետևէին դարաւոր աւանդութեամբ:

Ժողովը գումարեցաւ 'ի Բարիզ 1806 յուլիս 15ին. այս ժողովոյ անդամք ընտրուեր էին 'ի բարունեաց, 'ի կայուածատեարց և յայլ նշանաւոր իտալիացիաց, որոց թիւն ալ համեմատ էր ըստ բազմամարդութեան այլևայլ գաւառաց: Ժողովեցան 115 ընտրեալք ընդ նախագահութեամբ Պորտոցի բորդուգէզ իտալիացի մը Ֆլորդատի Աբրահամու. Ժողովը կոչուեցաւ Սինեդրիոն (Սանէտրին), վասն զի Նաբոլէոն կը փափագէր աւանդական անուններ տալ այս տեսակ զումարմանց:

Սակայն խնդրոց առաջարկութեան կերպին մէջ՝ Նաբոլէոն Ա. մեծ տգիտութիւն և անփորձութիւն ցուցուց ընդհանուր Հրէից բարուց

և ուղիւրութեանց և կրօնական կարծեաց կամ համոզմանց նկատմամբ: Տատուերկու խնդիրք քննուեցան. այսինքն բազմակնութիւն, ամուսնալուծութիւն, խառն ամուսնութիւնք, արգիլեալ արուեստք կամ շահադիտութիւնք և այլ բազմաթիւ խնդիրներ:

Շարունակելի

ՅՈՎՍԷՓ ՅԵ — ԱՄԵՔԵՍՍ

ՄԱՆԿՈՒԹԻՒՆՆ

Ժ Ո Ղ Ո Վ Ր Դ Ա Վ Ա Ն Դ Ա Ս Ա Վ Ա Ր Գ Ի Մ Է Է

(Տես յէջ 112)

Մ Ա Յ Ր

**Չ**ԱՌԱՎԱՅՈՑ դաստիարակութեան զլիաւոր մասը մտայրերէն կախումն ունի. որդիք ծնանիլն իրենց համար մեծ արդիւնք մը չէ, այլ զանոնք զարգացընելուն և անոնց լաւ կրթութիւն տալուն մէջ կը կախանայ իրենց առաքինութիւնն և ստոյգ փոխարինութիւնն: Քանի մը պարագաներու սակաւազէպ բացառութենէն դուրս, իրենց նուիրական և սուրբ պարտք մ'է զլաւակիին մնուցանել, և զայս կըսենք նաև բարեկեցիկ մարց համար. իրենք պիտի ուղղեն նոցա առաջին քայլերն, որովհետև որդւոց կրթութիւնը մայրերուն ծնկաց վրայ կ'ըսկըսի և հոն կ'որորի հայրենեաց ճակատագիրն:

Ամեն կրթութիւն 'ի մօրէն կ'ըսէ Արիստոտէլ իր գրուածոց մէջ, և դեմոսթենէս ուզեց Աթենքի մեծ տիկնոջ մը դատապարտութիւնն, որ վարձկան օտար կնոջ դիեցնել կու տար իր որդին:

Գուցէ Ներոն այնքան վայրագ չէր մեծնար, եթէ պինքը սնուցանող գայեակն ախտաւոր և դինով չըլլար, և ոչ այնչափ զգուելի կա-